ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 հունիսի 2023 թվականի N 877 - Ա

ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 21-րդ մասը, Վերակառուցման վարկերի (ՎՎԲ), Եվրոպական ներդրումային բանկերի վարկային և Հայաստանի Հանրապետության կառավարության համաֆինանսավորման միջոցներով «Համայնքային ենթակառուցվածքների II ծրագիր, փուլ 3 - Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնում» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) շրջանակներում Հայաստանի Հանրապետության 6 մարզերի (Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Արմավիրի, Վայոց ձորի և Սյունիքի) 37 բնակավայրերում իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերակառուցման աշխատանքների պատշաճ իրականացման նպատակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ու մ է.

1. 2023 թվականի մայիսի 1-ից մինչև 2024 թվականի մայիսի 31-ը սույն որոշման հավելվածում նշված կապալառու կազմակերպություններին շինարարական աշխատանքների դիմաց վճարումները պայմանագրով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած փոխարժեքի

փոխարեն իրականացնել՝ հաշվարկների հիմքում կիրառելով 1 եվրո=500 ՀՀ դրամ փոխարժեքը:

2. Սույն որոշման հավելվածի 1-ին և 2-րդ կետերում նշված կապալառու կազմակերպությունների նկատմամբ մեղմացնող միջոցառումների վճարումներն իրականացնել՝ համաձայն ծրագրի ֆինանսավորման համապատասխան աղբյուրների:

3. Սույն որոշման հավելվածի 3-րդ կետում նշված կապալառու կազմակերպության նկատմամբ մեղմացնող միջոցառումների վճարումներն իրականացնել ամբողջովին Հայաստանի Հանրապետության կառավարության համաֆինանսավորման աղբյուրից:

4. Սույն որոշման հավելվածում նշված կապալառու կազմակերպությունների պայմանագրերի ժամկետները երկարաձգել մինչև 2024 թվականի մայիսի 31-ը՝ կասեցնելով պայմանագրերի ընդհանուր պայմանների 8.7-րդ կետով սահմանված կատարողի նկատմամբ հաշվարկվող տույժերի հաշվարկը և պայմանագրով սահմանված՝ ներառյալ սույն որոշումից բխող բոլոր պարտավորությունների ամբողջական կատարման դեպքում, զիջել դրանք: Ընդ որում՝ սույն որոշման 1-ին կետով սահմանված ժամկետում աշխատանքները չկատարելու դեպքում տույժերը հաշվարկվում են նաև կասեցման ժամանակահատվածի համար:

5. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ սույն որոշման հավելվածում նշված կապալառու կազմակերպությունների նկատմամբ մեղմացնող միջոցառումների կիրառման նպատակով՝ ծրագրի համար անհրաժեշտ լրացուցիչ համաֆինանսավորման միջոցները հատկացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը 2023 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին՝ անհրաժեշտության դեպքում ներկայացնելով «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն որոշման մեջ վերաբաշխում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ:

6. Առաջարկել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենին՝ սույն որոշման հավելվածում նշված պայմանագրերում ապահովել սույն որոշումից բխող համապատասխան փոփոխություններ:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2023 թվականի մայիսի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

02.06.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ